Տիգրանակերտը Նիզիբիից (Մծբին) 37 մղոն հեռու էր, իսկ այդ քաղաքը դտնուում է Միջագետքում, Տիգրիս գետի վրայ՝ Նինուէից 35 մղոն հեռու։

"Սուլթանիյէն շատ անգամ աւերուեց. առաջին անգամ Խօջա Ռէշիդ՝ Պարսկաստանի թագաւորից, որին պատմագիրները կոչում են Գիւղան, որովհետեւ նա ապստամբել էր եւ ղէնք էր վերառել այդ թագաւորի դէմ. ապա Թիմուրլէնկն աւերեց։ Խամայէլ Սոֆիի նախորդները, սկսեալ Հիճրէյի 700 թուականից, այն է 1300ից, մի քանի ժամանակ այդտեղ հաստատեցին իրանց բնակութիւնը. եւ ասում են, որ մի քանի դար առաջ, Հայաստանի վերջին թագաւորներն այդտեղ էին հաստատել իրանց արքունիքը, եւ նրանց ժամանակին չորս հարիւրից աւելի եկեղեցիներ կային։ Այդ եկեղեցիների շատերի աւերակները դեռ տեսնուում են, բայց ամբողջ մնացած մի հատ չկայ, եւ ոչ եւս մի հատ քրիստոնեայ է բնակուում այդտեղ։"

Մի այլ հեղինակ՝ Ադամ Օլէարիոս, որ ճանապարհորդեց Պարսկաստան 1633—1639 թուին՝ ուրեմն Շարդէնից առաջ, ահա ինչ է գրում։

"Սուլթանիյէ քաղաքը հեռուից շատ գեղեցիկ է երեւում՝ մի քանի սիրուն շինութիւնների, բազմաթիւ զանգակատների[1] եւ մեծ սիւների պատճառով, բայց ներսից բոլորովին անապատ է, եւ բոլոր պարիսպները քանդուած են։ Առաջ, նա Պարսկաստանի ամենամեծ եւ գեղեցիկ քաղաքներից մին էր եւ կէս մղոնից աւելի երկայնութիւն ու-

---

1 Արդեօք Օլէարիոսի ժամանակ դեռ կանգուն էին եկեղեցիների զանգակատները, թէ՝ զանգակատուն ասելով հասկանում է մինարէները. չգիտենք, հաւանական է վերջին ենթադրութիւնը։ *Ծան. Թարգմ.*